

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2022-2023 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

09 դեկտեմբերի 2022թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ. Ս. Վարդապետյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի ատեստավորման հարցը: **Զեկուցող՝ Ս. Վարդապետյան**
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անժելա Տիգրանի ատեստավորման հարցը:**

Հստեղին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն Ս. Վարդապետյանին, ով հաղորդեց, որ Անժելա Հարությունյանի ատեստավորման հարցը քննարկվել է Կենսաբժշկագիտության ամբիոնում և, հաշվի առնելով ասպիրանտի կողմից կատարված աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման:

Ս. Վարդապետյանը տեղեկացրեց, որ ասպիրանտուրայում ուսուցման 3 ամիսների ընթացքում ասպիրանտը մասնակցել է կրթական բաղադրիչի «Պարտադիր դասընթացներ և քննություններ» և «Ընտրովի դասընթացներ» բաժիններով նախատեսված առարկաներից «Մասնագիտական օտար լեզու»,

«Փիլիսոփայություն», «Հոգեբանություն», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» դասընթացներին և պատրաստվում է հանձնել համապատասխան քննություններն ու ստուգարքները:

Ներկայումս ատենախոսական աշխատանքի ղեկավարի հետ միասին մշակված ծրագրով ասպիրանտն իրականացնում է նաև ատենախոսության շրջանակներում գրականության ուսումնասիրություն և նախատեսված գիտահետազոտական աշխատանքները:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով Կենսաբժշկագիտության ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանին:

2. Ընթացիկ հարցեր:

- ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գործունեության տարեկան պլանավորման հարցի քննարկում:

Ելույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն Ա. Գեոլջանյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց որ համաձայն Շ/155-22 շրջաբերականի, անհրաժեշտ է կազմել Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության պլանավորում: Ա.Գեոլջանյանն առաջարկեց ամբիոնների վարիչներին, յուրաքանչյուր ամբիոնի համար կազմել տարեկան պլանավորման նախագիծ՝ համաձայն ԵՊՀ ռազմավարական պլանավորման կենտրոնի տրված ձևաչափի, այնուհետև բոլորի միավորման արդյունքում կկազմվի ինստիտուտի գործունեության տարեկան պլանավորման փաստաթուղթը:

Որոշեցին՝ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝

ք.գ.թ., դրցենտ

Ս. Վարդապետյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

ք.գ.թ., դրցենտ

Ա. Դադայան